# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԺԱՄԱՆԵՑ ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով դեկտեմբերի 11-ին չորսօրյա այցով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը՝ Մոսկվայի Պատրիարքարանի Արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ Վոլոկոլամսկի միտրոպոլիտ Իլարիոն Ալֆեևի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում են Պատրիարքարանի վարչական ղեկավար Սոլնեչնոգորսկի Սերգիյ եպիսկոպոսը, Տ. Իոան աբեղա Գուայտան, Իոան սրկ. Կոպեյկինը, տիար Լեոնիդ Սեբաստիանովը, տեր և տիկին Պալեստինինները, տիկին Լարիսա Մոնախովան:

Պատվիրակությանը «Զվարթնոց» օդանավակայանում դիմավորեցին Նոր Նախիջևանի և Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, ինչպես նաև ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Վյաչեսլավ Կովալենկոն և Քանաքեռի Ս. Տիրամոր Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Արսենի քահանա Գրիգորյանցը:

Օդանավակայանից պատվիրակությունն ուղևորվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ուր Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչներին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց այցի առիթով՝ կարևոր նկատելով նման փոխայցելությունները եղբայրական հարաբերությունների առավել սերտացման և համագործակցության զորացման համար: Վեհափառ Հայրապետը մասնավոր անդրադարձ կատարեց երկու Եկեղեցիների և Հովվապետերի միջև առկա կապերին, որոնք արդյունավորվում են բարի իրագործումներով մեր երկու ժողովուրդների հոգևոր կյանքի պայծառության և Եկեղեցու և հասարակության առջև ծառացած զանազան մարտահրավերների հաղթահարման համար:

Նորին Սրբությունը նաև հույս հայտնեց, որ առաջիկա տարին ավարտին կմոտենան Մոսկվայի հայկական եկեղեցական համալիրի կառուցման աշխատանքները և մասնակցությամբ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքի կկատարվի բացումը հայաշունչ մի նոր կենտրոնի և օծումը առաջնորդանիստ հրաշակերտ եկեղեցու, ինչը կարևոր հերթական արտահայտությունը կդառնա երկու ժողովուրդների դարավոր բարեկամության: Վեհափառ Հայրապետը տեղեկացրեց նաև, որ 2011թ. Հայաստանում կանցկացվի ԱՊՀ երկրների Միջկրոնական խորհրդի նախագահության ժողովը:



Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը Մայր Աթոռում

Իր հերթին Իլարիոն միտրոպոլիտը Ամենայն Հայոց Հայրապետին փոխանցեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի եղբայրական սերը եւ ջերմ ողջույնները, ապա շնորհակալություն հայտնեց հրավերի եւ ջերմ ընդունելության համար՝ վստահություն հայտնելով, որ այցը հնարավորություն կտա լավագույնս ծանոթանալու Եկեղեցու գործունեության տարբեր ոլորտներում եւ առավել սերտացնելու միջեկեղեցական կապերը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց Հայ Առաքելական Եկեղեցու առաքելությանը, եկեղեցական կյանքի խնդիրներին եւ մարտահրավերներին, քննարկվեցին միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերություններին, ընկերային եւ կրթական ոլորտում երկու Եկեղեցիների համագործակցությանը վերաբերող մի շարք հարցեր:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը եւ Տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քահանա Մելիքյանը:

Այնուհետեւ պատվիրակությունն այցելեց Մայր Աթոռի թանգարաններ եւ ծանոթացավ համայն հայության հոգեւոր կենտրոնում պահպանվող հայ ժողովրդի հոգեւոր եւ պատմամշակութային սրբություններին: Ապա շրջայց կատարվեց Սուրբ Էջմիածնում, որի ընթացքում պատվիրակության անդամները ծանոթացան Մայր Աթոռի կառույցներին, Հայ Եկեղեցու ներկայիս հոգեւոր-կրթական, ընկերային, եկեղեցաշինական գործունեությանը:

Նույն օրը Ռուս Եկեղեցու պատվիրակությունն այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Շողակաթ» հեռուստաընկերություն, որտեղ Իլարիոն միտրոպոլիտը հարցազրույց տվեց հեռուստաընկերությանը, որի շրջանակներում անդրադարձ կատարվեց Ռուս Եկեղեցու գործունեությանը, փոխհարաբերություններին այլ քրիստոնեական Եկեղեցիների եւ կրոնների հետ, Եկեղեցի-պետություն, Եկեղեցի-հասարակություն հարաբերություններին եւ տարբեր մարտահրավերներին:

Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը դեկտեմբերի 12-ի առավոտյան այցելեց Քանաքեռի Ս. Տիրամայր ռուսական եկեղեցի, ուր Վոլոկալամսկի միտրոպոլիտ Իլարիոնը մատուցեց Ս. Պատարագ: Արարողության ավարտին Իլարիոն միտրոպոլիտն օրհնության իր խոսքն ուղղեց ռուս համայնքի ներկայացուցիչներին: Ներկաներին ողջունեց նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը:

Այնուհետեւ պատվիրակները մեկնեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ուր տեղի ունեցավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մոսկվայի Պատրիարքարանի Արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ Վոլոկոլամսկի միտրոպոլիտ Իլարիոնի առանձնազրույցը:

Հանդիպումից հետո պատվիրակությունը Մայր Տաճարում ներկա գտնվեց Սուրբ Պատարագին, որի ընթացքում պատարագիչ Տ. Մուշեղ վարդապետ Բաբայանը հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության ողջունեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչներին՝ շեշտելով եղբայրական փոխայցելությունների կարեւորությունը: Ս. Պատարագի երգեցողությանը մասնակցում էր նաեւ իտալահայ հանրահայտ մեներգչուհի Ռոզի Սվազլյանը:

Օրվա երկրորդ կեսին պատվիրակությունը մեկնեց Սեւանի Վազգենյան հոգեւոր

դպրանոց, ուր Ռուս Եկեղեցու ներկայացուցիչներին ընդունեց դպրանոցի տեսուչ Տ. Շնորհք արեղա Սարգսյանը: Հյուրերը հանդիպում ունեցան ճեմարանականների հետ՝ ունկնդրելով նրանց ներկայացրած գեղարվեստական հայտագիրը: Վերջում Իլարիոն միտրոպոլիտն իր պատգամը բերեց ուսանողներին, հանգամանորեն պատասխանեց նրանց հետաքրքրող հարցերին:

Դեկտեմբերի 13-ին Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակության ժամանակացույցը հագեցած էր տարբեր վանքեր այցելություններով: Օրվա սկզբին ռուս պատվիրակները մեկնեցին Կեչառիսի վանական համալիր, այնուհետեւ ուղեւորվեցին Գեղարդավանք: Վանահայր Տ. Հարություն աբեղա Կիրակոսյանի ուղեկցությամբ նրանք շրջայց կատարեցին Գեղարդավանքում՝ ծանոթանալով վանքի պատմությանը եւ ներկայիս կյանքին:

Օրվա ավարտին Նոր Նորքի հայորդյաց տան սաներն ի պատիվ հյուրերի պատրաստել էին համերգային ծրագիր, որի ավարտին Հայորդյաց տների հոգեւոր տեսուչ Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյանը Ռուս Եկեղեցու պատվիրակությանը հանգամանորեն ներկայացրեց մանուկների եւ պատանիների հետ Հայ Եկեղեցու կողմից տարվող աշխատանքը:

Դեկտեմբերի 14-ին պատվիրակությունը Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու բյուրավոր հայ նահատակների անմահ հիշատակին:

Հուշահամալիրում Մոսկվայի Պատրիարքարանի Արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ Վոլոկալամսկի միտրոպոլիտ Իլարիոնը ծաղկեպսակ զետեղեց, ապա աղոթեց Հայոց Եղեռնի զոհերի հոգիների հանգստության համար: Հիշողության պուրակում միտրոպոլիտ Իլարիոնը նաեւ ջրեց Մոսկվայի եւ Համայն Ռուսաստանի Կիրիլ Պատրիարքի ձեռամբ տարեսկզբին տնկված ծառը:

Այնուհետեւ պատվիրակությունն ուղեւորվեց Երեւանում կառուցվող Ս. Խաչ ռուսական եկեղեցի, ուր Վոլոկալամսկի միտրոպոլիտը ծանոթացավ շինարարական աշխատանքների ընթացքին:

Կեսօրին պատվիրակությունը մեկնեց Մոսկվա:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ<br>ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Դեկտեմբերի 15-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Երեւանում մեկնարկված «Ցեղասպանության հանցագործությունը, կանխարգելում, դատապարտում եւ հետեւանքների վերացում» խորագրով միջազգային գիտաժողովի մասնակիցներին՝ ցեղասպանագիտության բնագավառում ճանաչված շուրջ 20 գիտնականների՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԳ փոխնախարար Արման Կիրակոսյանի:

Նորին Սրբությունը ողջունելով գիտնականների այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ կարեւորեց ու խրախուսեց նրանց առաքելությունը ցեղասպանության ճանաչման գոր-